ԵՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌԱՌՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ շրջանակներում տրամադրված ենթադրամաշնորհների շրջանակներում ստեղծված

«Հայաստանի կայուն և թափանցիկ էներգետիկայի» ՔՀԿ կոալիցիայի

ՋԱՏԱԳՈՎՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
(նախագիծ)

ԵՐԵՎԱՆ 2019

Սույն Ջատագովման ռազմավարությունը մշակվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցմամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Էներգախնայողության աջակցման հիմնադրամ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ՔՀԿ-ները հանուն կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման կոալիցիայի կարողությունների զարգացման» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Էներգախնայողության աջակցման հիմնադրամ» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն 4
2. ՀՀ գործող կայուն էներգետիկայի քաղաքականության համատեքստը 4
3. Ոլորտային խոչընդոտները 5
4. Կոալիցիայի դերը 6
5. Ջատագովման թիրախ կառույցները 6
5. Ջատագովման խնդիրները 7
6. Առաջնահերթությունները 7
7. Ջատագովման ռազմավարություն 9
8. Գործողություններ 10

1.Ներածություն

Էներգետիկ ոլորտը ռազմավարական նշանակություն ունի ՀՀ անկախության, անվտանգության և տնտեսության կայուն զարգացման համար: Այն դիտվում է որպես տնտեսության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի հիմնական մասերից մեկը: Ոլորտում իրականացվող քաղաքականության հիմնահարցերից մեկը հանդիսանում է ժամանակակից էներգետիկ սարքավորումների կիրառմամբ ապահովել հուսալի էներգամատակարարում՝ խթանելով երկրում էներգախնայողությունը:

Հայաստանը որդեգրել է կայուն տնտեսական զարգացման քաղաքականություն, որը ենթադրում է տնտեսության բոլոր ոլորտների համընթաց զարգացում և այդ ենթատեքստում էներգետիկան, որպես կարևորագույն ոլորտ, կոչված է ապահովելու երկրի այնպիսի առաջընթաց, որը բնապահպանական խնդիրների ներդաշնակեցման և հավասարակշռման միջոցով նախադրյալներ կստեղծի հաջորդ սերունդների կայուն զարգացման համար՝ միաժամանակ նվազեցնելով էներգիայի կորուստների մակարդակը:

Մեր երկրի ընդերքի ածխաջրածնային վառելիքի պաշարների բացակայության պայմաններում էներգետիկ ապահովվածության համար հրամայական է դարձել էներգետիկ պաշարների, այդ թվում նաև էներգիայի վերականգնվող աղբյուրների (վերականգնվող էներգետիկա) լայնածավալ օգտագործումն ու լիակատար ներառումը վառելիքաէներգետիկ հաշվեկշռի մեջ:

2. ՀՀ գործող կայուն էներգետիկայի քաղաքականության համատեքստը

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված է, որ առաջիկա հինգ տարիներին (2019-23թթ.)՝ ՀՀ կառավարության գործունեությունը միտված պետք է լինի ՀՀ-ում բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական, ինչպես նաև բնապահպանական բարձր չափանիշներին համապատասխանող, արտահանմանը միտված մրցունակ և ներառական տնտեսություն կառուցելուն:

ՀՀ կառավարության նոր ծրագրով առանձնակի կարևորվել են էներգաարդյունավետության միջոցառումների ներդրմանն ուղղված քաղաքականության ապահովումը, վերականգնվող էներգետիկ և էներգախնայող համակարգերի զարգացումը, միջազգային կառույցների հետ էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի օգտագործման մեխանիզմների գործարկման նպատակով համագործակցության ընդլայնումը: Ուստի այլընտրանքային էներգետիկան զարգացնելով՝ ապահովում ենք համեմատական

<<անկախություն>> ներկրվող էներգակիրներից և էլ.էներգիայի ստացման դիվերսիֆիկացված տարբերակների հնարավորություն:

Միաժամանակ՝ ՀՀ-ը ստանձնել է մի շարք միջազգային պարտավորություններ՝ ջերմոցային գազերի կրճատման և կլիմայի փոփոխության ադապտացման և բացասական ազդեցության մեղմման ուղղությամբ, ինչն անխուսափելու հանգում է այլընտրանքային, արդյունավետ և վերականգնվող էներգետիկան խթանելուն, ինչի արդյունքում կունենանք՝

- էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործում,
- շրջակա միջավայրի պահպանության,
- ջերմոցային գազերի արտանետումների կրճատում,
- էներգակիրների տատանվող գների պարագայում՝ էներգաարդյունավետ լուծումների կիրառում, այլընտրանքային և վերականգնող էներգետիկայի իսնտիտուտի խորացում, ամրապնդում և դրա շնորհիվ՝ էներգետիկ ռեսուրսների ծախսի նվազեցում:

Վերոնշվարկած կետերի իրականացումը հանդիսանում է ՀՀ ռազմավարական առաջնահերթություններից մեկը:

Հաշվի առնելով էներգետիկ ոլորտում տիրող իրավիճակը և համընդհանուր տենդենցները՝ 2018 թ. «Էներգախնայողության աջակցման հիմնադրամ» ՀԿ-ն «ՔՀԿ-ները հանուն կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման» ՔՀԿ կոալիցիայի իր գործընկերներ «Կանայք կլիմայում և էներգատիկայում» ՀԿ-ի, «Աջակցություն բարեփոխումներին» ՀԿ-ի, «Մարդկային կապիտալի զարգացման կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ կոնսորցիումով մեկնարկեցին «Հայաստանի կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված» (“CSOs for Sustainable and Transparent Energy Development”) ծրագիրը:

3. Ոլորտային խոչընդոտները

Ծրագրի արդիականությունը և անհրաժեշտությունը անմիջականորեն կապված է ոլորտում առկա մի շարք խնդիրներից, մասնավորապես՝

- Վերականգնվող էներգետիկայի ոլորտում ներդրումների խոչընդոտները,
- Քաղաքապետների դաշնագրից բխող այլ պարտավորություն Կայուն էներգետիկ (և կլիմայական) զարգացման ծրագրերի մշակման և վերահսկման ազգային միացյալ մեթոդական հարթակի բացակայությունը.
- ՏԻՄ-երի էներգարդյունավետության նախաձեռնությունների մշտադիտարկման և բարելավման անհրաժեշտությունը

- Հանրային աշխատանքների գործընթացում (օրինակ՝ պետական գնումների) էներգարդյունավետություն ապահովող կանոնակարգերի և կարգավորիչ միջոցների լավագույն փորձի հիման վրա հանրային քաղաքականությունների մշակման և/կամ բարելավման ու ջատագովության անհրաժեշտությունը,
- Կանանց սահմանափակ դերը համայնքային էներգետիկ և կլիմայի փոփոխության մեղման և հարմարվողականության քաղաքականության մեջ:

4. Կոալիցիայի դերը

Կոալիցիան արդյունավետ հարթակ է էներգաարդյունավետության և էներգախնայողության ինստիտուցիոնալիզացիայի և լայնամասշտաբ ներդրումների իրականացմանը խոչընդոտող գործոնների վերհանման և դրանց վերացմանն ուղղված առաջարկությունների մշակման համար: Այս ուղղությամբ կտարվեն հետևյալ գործողություններները՝

- խորապես ուսումնասիրել, վերլուծել և գնահատել ոլորտը,
- բացահայտել առկա խնդիրները,
- մշակել և ներկայացնել խնդիրների այլընտրանքային լուծման առաջարկությունների և քաղաքականությունների բարելավման օրենսդրական/կարգավորման փաթեթներ՝ մշակված բոլոր շահագրգիռ կողմերի հետ:
- մշակել թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմներ, որոնք կնպաստեն ծրագրի իրականացման ոլորտում կառավարման գործընթացների համակարգային փոփոխություններին:

Նշված խնդիրների լուծման ուղղությամբ Կոալիցիան կիրականացնի նաև ջատագովման գործընթաց, ինչի շնորհիվ կմեծանա նպատակին հասնելու հավանականությունը: Ջատագովման միջոցով փորձ կարվի ազդելու որոշում կայացնողների վրա՝ ուղղորդելու վերջնական որոշումները կայացնելիս, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության հասնելու օրենսդրական փոփոխուփյունների: Այս գործընթացների ամբողջության նպատակն է՝ հասնելու կոալիցիայի առջև դրված թիրախներին:

Ջատագովան գործընթացում Կոալիցիան կողմից կիրառվող մեթոդներն են ՝ ուղղակի և միջնորդված ջատագովումը՝ իրականացնելով ազդեցություն բազմաշերտ քաղաքական որոշումների ձևաորման և իրականացման վրա:

5. Ջատագովման թիրախ կառույցները

Կոալիցիայի կողմից իրականացվող ջատագովման ընթացքում ներգրավված և աջակից պետական կառույցներն ու գերատեսչություններն են դիտարկվելու՝

- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն;
- ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն;
- ՀՀ բնապահպանության նախարարություն;
- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
- ՀՀ ֆինանսների նախարարություն;
- ՀՀ քաղաքաշինության կոմիտե;
- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (հատույթն օրենսդրական տիրույթում է)
- ՏԻՄ-երը

5. Ջատագովման խնդիրները

Քանի որ Կառավարության 2019-2013թթ.ծրագրի **խնդիրներից** մի մասը զուգընթաց է Կայուն և թափանցիկ էներգետիկայի Կոալիցիայի թիրախին հասնելու ուղղուն, ուստի այդ խնդիրների հավանական լուծումները և մեր ծրագրի նվաճված նպատակները ի վերջո կունենան գումարային արդյունք՝ ինչն էլ կհանգեցնի ազդեցիկ դրական փոփոխության։

Այդ խնդիրնեն են՝

- ձեռնարկատիրության, ձեռներեցության, նորարարության խթանումը, աշխատանքի, ստեղծարարության քաջալերումը՝ նաև ֆինանսական միջոցների հասանելիությունը բարձրացնելու միջոցով,

- պետական գնումների արդար և թափանցիկ համակարգի ներդրումը, այդ թվում՝ ապրանքների և ծառայությունների գնումների անհրաժեշտության հիմնավորմամբ, դրանք ճիշտ ժամանակին ու պատշաճ ծավալով իրականացնելու արդյունավետ համակարգի ներդրումը, շահերի բախման երևույթների բացառումը,

- մասնակցային կառավարման ինստիտուցիոնալացումը՝ շահառու խմբերի իրական ներգրավվածությունն ապահվելու միջոցով,

- տեսչական մարմինների ավելի արդյունավետ կառավարման միջոցով հասարակության և սպառողների համար առավել անվտանգ միջավայրի ապահովումը, սպառողների շահերի պաշտպանությունը. այս առումով, չափազանց կարևոր է պետության, հասարակության և տնտեսավարող սուբյեկտների օրինական շահերի և իրավունքների միջև հավասարակշռության ապահովումը,

- անցում կատարելը ռազմավարական պլանավորման և փաստերի ու տվյալների վերլուծության վրա հիմնված քաղաքականության մշակման մոդելի։

6. Առաջնահերթությունները

ՀՀ էներգետիկ ոլորտին ուղղված առաջնահերթություններն են՝

- երկրի էներգետիկ անկախության ապահովման ու անվտանգության բարձրացում,
- տարածաշրջանային ինտեգրման գործընթացի ապահովում,
- էներգակիրների մատակարարման տարատեսականացում և էներգաարդյունավետ ու նոր տեխնոլոգիաների ներդրում,
- էներգետիկ ոլորտի կայուն զարգացում՝ հենվելով տեղական առաջնային (վերականգնվող) էներգապաշարների լիիրավ և արդյունավետ օգտագործման՝ մասնաորապես՝
    - վերականգնվող էներգիայի աղբյուրների արդյունավետ օգտագործմանը և զարգացման խթանմանը,
    - Էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմները և թողունակությունը գնահատելով՝ կիրականացվեն արևային համակարգային կայանների մրցութային եղանակով կառուցման ծրագրեր՝ մինչև 2022 թվականը ներքին սպառման կառուցվածքում այդ կայանների կշիռը հասցնելով առնվազն 10 տոկոսի:

Կոալիցիայի տեսանյունից կայուն էներգետիկայի զարգացումը, վերոհիշյալ համատեքստում, պարտադիր է իրականացնել հաշվի առնելով էներգետիկ կառավարման այնպիսի համակարգի ներդրման անհրաժեշտությունը, որը միտված է՝

- հանրային և մասնավոր հատվածի կողմից սեփական էներգասպառման հնարավորությունների ընդլայնմանն ու արդյունավետության բարձրացմանը,
- մասնավոր-համայնք համագործակցության հնարավորությունների ընդլայնմանը:
- նհրաժեշտ է նաև ընդլայնել միջազգային կառույցների հետ էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի օգտագործման խթանման մեխանիզմների գործարկման նպատակով համագործակցությունը,
- վերանայել երկարաժամկետ ռազմավարական ծրագրերը՝ սահմանելով թիրախներ էներգախնայողության, վերականգնվող էներգիայի, ինչպես նաև էներգետիկ անվտանգության ցուցանիշների համար:

Վերոհիշյալ առաջարկները ներկայացվել են ՀՀ կառավարություն և արտացելվել Կառավարության երկարաժամկետ զաչգացման ծրագրում: Կոալիցիայի կողմից իրականացվող ջատագովման նպատակն է՝

- Տեղեկացնել որոշում կայացնողներին և քաղաքական ուժերին կարիքների, խնդիրների մասին և ազդել քաղաքական որոշման վրա;

- Նպաստել զարգացող քաղաքականության վրա նոր և նորարարական ուղիներով և մատուցել նոր լուծումներ ստեղված խնդիրների շուրջ;
- Բերել կարևոր խնդիրները ուշադրության կենտրոն՝ հնարավորինս նորարարական և արդյունավետ լուծումներ առաջարկելով։

7. Ջատագովման ռազմավարություն

Քանի որ Կոալիցիան ունի հեռահար նպատակներ և երկարաժամկետ պլանաորում, ուստի ջատագովումն էլ պետք է լինի պլանաորված և փուլային։

Ջատագովման ռազմավարության փուլերն են՝

- Նախապատրաստական,
- Բուն ջատագովում՝ ուղղակի և անուղղակի,
- Արդյունքների ամփոփում և գնահատում,
- Տրամաբանական շարունակության մշակում։

Նախապատրասրական փուլում անհրաժեշտ է, որ Կոալիցիայի անդամները կամ ջատագովման թիմը՝

- լավ տեղեկացված լինեն խնդրի մասին, ոլորտը և խնդիրը այդ ոլորտում համապարփակ վերլուծված,
- ունենան հստակ նպատակ, խնդիր կամ առաջարկ,
- հնարավորինս զինված լինեն հաղորդակցության և բանակցություններ վարելու հմտություններով՝ տեսակետը կամ խնդիրը պարզ, հստակ, ընկալելի՝ սահմանափակ ժամանակահատվածում ներկայացնելու համար։

Բուն ջատագովման գործընթացը Կոալիցիան պատրաստվում է իրականացնել երկու ուղղություններով՝ ուղղակի և անուղղակի։

Ուղղակի ջատագովումը ներառում է քաղաքական որոշում կայացնողների հետ՝

- Հանդիպումներ,
- Խնդրի քննարկում,
- Խնդրի հիմնավորում և կոնկրետ առաջարկությունների ներկայացում։

Ուղղակի ջատագովումը նախատեսվում է իրականացնել՝

- Դեմ առ դեմ հանդիպման ժամանակ,
- Ազգային ժողովի քննարկումների ժամանակ,
- Հանրային լսումների քննարկումների ժամանակ։

Անուղղակի ջատագովումն իր մեջ ներառում է՝

- Հասարակության լայն զանգվածներին խնդրի մասին տեղեկացում՝ ովքեր էլ իրենց հերթին անուղղակի ձևով ազդեցություն կունենան որոշում կայացնողների վրա,
- ԶԼՄ-ների (առցանց և տպագիր), ինչպես նաև հեռուստա և ռադիո հաղորդումների, գովազգային կամ ինֆորմացիոն վահանակներկի ներուժի ներգրավում,
- համայնքի բնակիչնեչին, մասնառրապես երիտասարդներին տեղեկացում խնդրի մասին՝ կազմակերպելով հանդիպումներ <<Թաուն Հոլլ>> ձևաչափով, դասընթացներ, հավաքներ, հարցումներ, ակցիաներ, ինչպես նաև՝ տարածելով տեղեկատվություն թռուցիկների և տեղեկատու տաղավարների միջոցով։
- Կազմակերպել ստորագրահավաքներ և հանրային միջոցառումներ։

8. Գործողություններ

Ուղղակի ջատագովման իրականացման համար Կոալիցիան նախատեսում է հետևյալ գործողությունները՝

- Տեղեկատվություն հավաքագրել հրատապ խնդրի փաստերի և իրավական խնդիրների և սահմանափակումների մասին,
- Մշակել շահագրգիռ կողմերի քարտեզ,
- Հստակ սահմանաել այն <<բանալի մեսիջները>>, որոնք անհրաժեշտ են փոխանցել պաշտոնյաներին,
- Հստակ սահմանել նպատակը և այն փոխզիջումները , որոնց պատրաստ ենք գնալու,
- Հասկանալ մեր օպոնենտին, ընդհանուր շահերը և հակազդեցության տեսակետները և որտեղ նրանք կարող են պատրաստ լինել զիջումների գնալու,
- Ոլորտային որոշում կայացնողների մեջ ընտրել նրանց, ովքեր կարող են աջակցել մեր ջատագովմանը և նպատակին հասնելուն,
- Հնարավորինս հասկանալ, թե ոլարտային քաղաքական ուժերը և պետական կառույցների ներկայացուցիչներն ինչպես կարձագանքեն մեր առաջարկներին,

- Գտնել շահակիր համայնքում ազդեցիկ մարդկանց, ովքեր ցանկություն կունենան աջակցել մեր գաղափարներին և գործընթացին,
- Ջատագովման գործընթացում ներգրավել որքան հնարավոր է շատ մարդկանց;
- Նպատակին հասնելուն ուղղված միջոցառումներ իրականացնելուց առաջ տեղեկացնել ԶԼՆ-ներին՝ հնարավորինս լայնամասշտաբ ծածկույթով միջոցառումները լուսաբանելու և ինֆորմացիան տարածելու համար։

Կոալիցիայի ջատագովման ռազմավարության արդյունավետ միջոցներից է դիտարկում պետական պաշտոնյաների հետ երես առ երես հանդիպումը։ Երես առ երես հանդիպման առավելություններն են՝

- Խնդրի կամ տեսակետի անկաշկանդ ներկայացումը անմիջապես որոշում կայացնողին՝ առանց ԶԼՄ-ների զտման և իր գործընկերների տեսադաշտից հեռու,
- Երես առ երես հանդիպումը քիչ ֆորմալ է և պոտենցիալ ունի լինելու ներգրավված և հիշարժան,
- Այս ձևաչափով քննարկումները հնարավորություն կտան երկուստեք (երկու կողմերի համար էլ) նոր լուս սփռել խնդրո առարկայի վրա ։ Ինֆորմացիան, որ կտրվի որոշում կայացնողին հնրարավորություն կտա խորքային և համակարգային հեռանկարային տարբերակներ քննարկել։ Իսկ որպես ջատագով, կարելի է ստանալ հետադարձ պատկեր, ինչը կնպաստի խնդրին նայել այլ անկյան տակ՝ թարմացված հիմնավորումներով։

Երես առ երես հանդիպումը նախատեսվում է նախապես շատ մանրակրկիտ պլանավորել՝ քանի որ խիստ զբաղված պաշտոնյան կարող է ուշադիր չլսել խնդրո առարկան և հարցը ընթանա սխալ և ոչ բարենպաստ ուղղությամբ, ինչը բացասական ստվեր կգցի խնդրո առարկայի վրա։ Ուստի կարևոր է հանդիպումը նախապես մանրամասն պլանավորել՝ երկուստեք ժամանակ չվատնելու համար։

<u>Կոալիցիայի ջատագովման ռազմավարության մեջ առանցքային տեղ է զբաղեցնում որոշում կայացնողների հետ հանդիպման ողջ գործընթացի հավուր պատշաճի կազմակերպումը։</u>

Որոշում կայացնողի հետ հանդիպման ժամանակ պետք է՝

- Խնդիրը ներկայացնել՝ հենվելով փաստերի վրա՝ խնդիրը ներկայացնելու ժամանակ կարևոր է ունենալ փաստեր և վիճակագրական տվյալներ՝ ինչը ցույց կտա, որ արդեն իսկ արվել է վերլուծություն և ներկայացված խնդիրը փաստարկված է և մերկապարանոց չէ։ Ընդ որում, տեղեկատվությունը պետք է լինի ամփոփ և հստակ, պարզ և դյուրընկալելի։ Հարկավոր է միշտ հիշել, որ պաշտոնյաները միշտ չէ, որ տիրապետում եմ իրենց ոլորտի այս կամ այն խնդրին ամբողջովին՝ տեխնիկական դետալների մեջ խորացած։

- Բանակցությունների ընթացքում առանցքից չշեղվել՝ խոսակցությունը վարել հիմնական առանցքային կետերի շուրջ: Որքան բարդ և խճճվաճ լինի ներկայացված տեղեկատվությունը, այնքան փոքր է հավանականությունը դիմացինի ընկալման և հետևաբար՝ հաջողության:
- Խոսակցության ընթացքում տեղեկանալ՝արդյոք կան հարցեր և փորձել հարցերն պատասխանել այնքան մանրամասն, որքան հնարավոր է՝ չշեղվելով առանքից:
- <<Պարտավորություն ստանձնելու>> մեխանիզմ կիրառել՝ խնդրել որոշում կայացնողին ինչ որ հստակ գործողություններ իրականացվի կամ պարտավորվի իրականացնել՝ ցույց տալու մեր խնդրի նկատմամբ վերջինիս աջակցությունը:

Որոշում կայացնողի հետ հանդիպումից հետո պետք է՝

- Շնորհակալության նամակ ուղարկել;
- Եթե կա առավել մանրամասն տվյալների կարիք՝ հետևել որ այն տեղ հասնի հասցեյատիրոջը;
- Հաղորդման արձանագրությունները հարկավոր է մանրամասն ուսումնասիրել՝ հաջորդ հանդիպումների նախապատրաստական աշխատանքների ընթացքում օգտագործելու նպատակով:

Կոալիցիայի ջատագովման ռազմավարության մեջ նախատեսվում է օգտագործել նաև կարևոր գործիքներից մեկը՝ հանրային լսումները, որոնցից առավել հաճախ օգտագործվում՝

- Հանրային լսումներ Ազգային Ժողովում,
- Ընդհանուր հանրային լսումներ,
- Դաշտային հանրային լսումներ
- Հանրային լսումներ՝ անցկացվող ազգային ժողովում: Սա լավ հնարավորուն կնձեռի Կոալիցիայի անդամներին և ջատագովման թիմին մասնակից դառնալ կառավարման գործընթացին և ունենալ արդյունքերի վրա ազդեցություն: Որպես բաց և ազատ միջոցառում՝ հանրային լսումները կարող են լուսաբանվել ԶԼՄ-ների կողմից լայնորեն՝ ինչը հնարավորություն կտա մեծ զանգվածների հասցնել Կոալիցիայի կողմից կարևորվող առանցքային ինֆորմացին և ուղղորդված կարծիք ձևավորել, ինչը կնպաստի մեր խնդրո առարկայի լուծմանը:

Քանի որ լսումներին մասնակցում են այն ուժերը և պաշտոնյաները, ովքեր պատասխանատուն են կոնկրետ ոլորտի զարգացման համար, ուստի լսումների ժամանակ

վերջիններս անմիջապես ներգրավված կլինեն խնդրի քննարկմանը և հավանական լուծումների առաջարկմանը։

Լսումները նաև հարթակ են, որեղ կարելի է ոլորտի և խնդրի վերաբերյալ առավել խորքային տեխնիկական տեղեկատվություն ստանալ անմիջապես ոլորտային պատասխանատուից։

- Ընդհանուր հանրային լսումներ, որոնք կարող են ստորաբաժանվել երեք կատեգորիաների՝ օրենսդրական, վերահսկողական կամ դիտորդական և հետաքննական։ Սրանք ևս կօգտագործվեն Կոալիցիայի կողմից՝ վերջնական թիրախին հասնելու համար։

- Դաշտային հանրային լսումներ կամ տեղում լսումներ՝ այս կարգի լսումները հնարավորություն կտան ոլորտի պատասխանատուներին հենց տեղում հանդիպել հանրության հետ, առավել մոտիկից և առարկայական ծանոթանալ

Շատ կարևոր և առանցքային է համարվում խնդրի ներկայացումը ոլորտային պաշտոնյաներին՝ մինչև քննարկումների սկիզբը և հետևաբար՝ որոշում կայացնելը, ինչն էլ նախատեսվում է անել ջատագովման թիմի կողմից՝ երես առ երես հանդիպումների ժամանակ։

Ջատագովման արդյունքների ամփոփումը և գնահատումը կոլաիցիայի կողմից կիրականացվի՝ հենվելով ջատագովման գործընթացի արդյունների վերլուծության վրա։

Արդյունքերն ամփոփելիս Կոալիցիան կդիտարկեն և կգնահատվեն՝

- ջատագովման իրականացման շրջանակները՝ մասնաորապես, արդյոք մենք հասել ենք նպատակին՝ մեր առջև դրված շրջանակներում,

- ջատագովման իրականացման ժամանակացույցը՝ մասնաորապես, արդյոք մեր առջև դրված նպատակին հասել ենք ժամանակին, իսկ եթե ոչ, ապա որքան ենք շեղվել ժամանակից,

- ջատագովման վրա ծախսված բյուջեն, արդյոք գործողությունների ծախսերն իրականացվել է նախապես պլանավորված գումարների շրջանակում և եթե ոչ, ապա որքան ենք շեղվել, եղել է գերծախս կամ՝ խնայողություն,

- ջատագովման խմբի բավարարվածության աստիճանը, այս ցուցանիշն իհարկե բավականին սուբյեկտիվ է։ Սովորաբար թիմը բավարարված է, երբ նվաճված է վերջնական նպատակը։ Փորձը ցույց է տվել, որ հաջողված ծրագրերից հետ ջատագովման թիմը մնում է ամբողջական, շարունակում է սկսված աշխատանքը, որն էլ անմիջական կապ ունի ջատագովման գործընթացի տրամաբանական շարունակության հետ,

- շահառուների բավարարվածությունը,

- ջատագովման արդյունքների ուժեղ և թույլ կողմերը, կիրականացվի SWOT վերլուծություն։

Ամփոփելով, պետք է Կոլաիցիան գնահատի, արդյո՞ք ջատագովման գործընթացը հասավ իր նշանակետին և որքան այն սահուն ստացվեց՝ արդյունքները նվաճվեցին ըստ ժամանակացույցի և առանց անսպասելի խոչընդոտների։

Տրամաբանական շարունակությունը կազմելիս ջատագովման թիմի կողմից կուսումնասիրվեն արդյունքները, կգնահատավեն ջատագովման ողջ գործընթացի ուժեղ և թույլ կողմերը, որի արդյունքում կկազմվի հետագա տրամաբանական գործողությունները և քայլերը։